

Ժամը 10-ին Աղաւնի ետ պանդոկ մտաւ, անտառին մէջ կարճ պտոյտէ մը ետք: Լոպին ցիր ու ցան քանի մը հոգի մնացեր էր -- երկու այլանդակ, սեւ կիներ փոռած բազմոցին վրայ, ծերունի մը բազկաթոռի մը մէջ ընկղմած, կէս-քուն պաշտօնեայ մը ամէն ինչ կը զոցուի կոր նորէն մտածեց ու պզտիկ, արագ քայլերով վերելակին առջեւը գնաց, նայուածքը գետին՝ սպասեց, անհամբեր իր սենեակը զոցուելու, կղպելու եւ առանձին վայելելու իր ներկայութիւնը: Վերելակին դուռը բացուեր էր -- ներս մտաւ, դուռը անշշուկ զոցուեցաւ ու պզտիկ տուփին մէջ փաթեց թելերը բարակուկ մարմնին շուրջ մինչ տուփին շարժումը կը տանէր, կը քաշէր իր հապճեպ մտերմութիւնը ինքզինքին հետ: Յետոյ դուրս ելաւ, փափուկ քայլերով յառաջացաւ մոխրագոյն, կակուղ, ապրող գորգին վրայէն: Իր դուռը հասած՝ արդէն առաւ սենեակին գոց, գաղտնի հոտը...:

Ներսն էր: Լոռութիւնը յանկարծ գրկեց զինքը -- առանձին էր, ի վերջոյ, ամբողջ օրուայ խենթ խնդուքը, հեւն ի հեւ խօսակցութիւնը կորսուած կեանքէն: Անշշուկ կղպանքը դարձուց, վառեց լոյսը, կոթնեցաւ դրան ու վերցուց աչքերը սենեակին առարկաներուն վրայ ու ներս առաւ միին գոյները, ծանր վարագոյրը, ծովային նկարը, հսկայ, պարապ անկողինը, անշարժութեան ու լոռութեան թեթեւ մարմինը: Յետոյ շուրջի մը պէս սեղանին քովը գնաց, աչքը հեռու պահեց հայելիէն, նստաւ, դուրս քաշեց պզտիկ դարակը ու մէջէն հանեց սեւ, հաստ տետրակը, յետոյ գրիչը: Անհամբեր, քանի մը երկվայրկեան սպասեց, յետոյ բացաւ օրագիրը ու սկսաւ գրել:

x
x x

Մինաս զոցեց պատուհանը, քաշեց քիթ քիթի ծալք ծալք, ծանր վարագոյրները: Կարճ, հինգած, յոգնած մարմինը շարժեցաւ դէպի բաղնիք ու կայնեցաւ հայելիին առջին իմա է աս երեսը մտածեց, ես եմ աս, եօթանասուն եղար Մինաս նայելով անկեանք աչքերուն, դեղնած մորթին, կլոր ու ճաղատ գլխուն: Երկվայրկեան մը նայուածքը սառեցաւ իր վրայ, յետոյ ետ սենեակին դարձաւ ու քալեց դէպի իր խոշոր պայուսակը ո՞ւր է արդեօք հիմա անիկա... մինա՞կն է... մտածեց, առանց ամապարանքի բացաւ պայուսակը ու դուրս հանեց իր մեծ ու հին ալպոմը, տարաւ պզտիկ սեղանին, վառեց լոյսը, քաշեց հսկայ աթոռը, նստաւ ու բացաւ առաջին էջը:

Ու մէկ ժամ, կէս-քուն, ամէն զիշերուայ պէս, Մինաս դարձուց էջերը, իւրաքանչիւր լուսանկարին հետ անձայն ու գուրգուրոտ խօսեցաւ, ու անոնք իրար պատմեցին իր գաղտնի բայց անգաղտնիք կեանքի փշրանքները, մանկութենէն մինչեւ պաթաթիութիւն, երիտասարդ տարիները, ձէզիրէի դպրոցին քսան տարիները, աշակերտները...: Բայց հօրը ու մօրը պատկերին առջեւ քիչ մը աւելի տնտնաց, յետոյ հասաւ Մաքրուհիին ու իր պսակի լուսանկարին հէյ կիտի կնիկ անցաւ միտքէն քան մը չտեսար կեանքէն եւ արագ մը անցաւ անոր թաղումի պատկերէն: Հոն էր իր պզտիկ Մարին, ձեռքէն բռնած ախ աղջիկս ախ անցաւ մտքէն դուն ինչպէ՞ս պապադ կը ձգես կը փախիս առ հէրկէլէին հետ, հայ տղա՞յ կը պակսէր:

Մինաս ոտքի ելեր էր, սիրտը խոռված: Գնաց պատուհան, բայց չբացաւ: Դուրսը լուսինը շլացուցիչ պայծառութեամբ ներկեր էր անտառը, ու վարը շարուած, լուռ, անկեանք օթոններուն մարմինները ի՞նչ ընեմ աս ամբողջ աղուորութիւնը խորհեցաւ: Անհամբեր էր ետ իր պատկերներուն դառնալու:

Նստած էր նորէն դեղնած պատկերներուն առջին: Պզտիկ դող մը մտեր էր մատներուն մէջ ու գլուխը աւելի մօտ էր հիմա մեծ լուսանկարներուն: Հասեր էր ամենէն կարեւոր պատկերին, լայն ու փայլուն, հոն վարը, պանդոկի մուտքի աստիճաններուն վրայ քաշուած, բոլորը մէկ, ութսուն հոգի, անցեալ տարի: Անշարժացաւ, նայուածքը մէկ կէտի վրայ, հոն, պզտիկ գլուխը, սեւ, առատ, ուռած մազերը, խումբին ճիշդ մէջտեղը, բոլորին հետ ու ամէն տեղ խնդացող, ամէն

վայրկեան բոլորին հետ խօսող, ամէնուն բարեկամը, նիհար ձեռքերը անոնց ուսերուն ու ձայնը, ձայնը ամէն տեղ, յետոյ յանկարծ առանձինը, ոչ ոք կայ շուրջը, մոռցուած բոլորէն բայց ոչ Օրիորդ Աղաւնի, ես կամ, մի տխրիր, մինչեւ աշխարհի վերջը ես կամ հետդ, քեզի առանձին չեմ ձգեր, ատոնք պարապ մարդիկ են... ես կամ եւ պիտի սիրեմ քեզ.....:

Տխրութիւն մը մտեր էր ներսը, խոնաւ էին աչքերը, դողաց շրթունքը, բայց չբացաւ բերանը: Հիմա անձկագին բայց գաղտնի հրճուանքով մը անոր անունը կրկնեց միտքէն, ինչպէս միշտ՝ երբ միտքը անոր երթար, տարիներու վարժութեամբ: Առանց գիտնալու գոցեր էր ապստամբ չէ, չեմ կրնար... չեմ կրնար մըմրաց, գլուխը կախ, ինչպէս ըրեր էր քսան տարիէ ի վեր, այն օրէն երբ առաջին անգամ Աթլանթիք Սիթի պանդոկին մէջ իրենց անօթի նայուածքները հանդիպեր էին բազմութեան ժխորին մէջ, յանկարծ տեսած զիրար մարդոց իրարանցումին նեղ բացուածքին մէջէն, երկվայրկեան մը միայն: Ու անկէ ետք, առանց մտածելու, այդ անօթութիւնը շարունակեց էր տեսակ մը ինքնագլուխ, այդ վառվռուն, խանդով փրփրուն եւ իր կեանքին ամայութիւնը լեցնող, զինքն իր անսահման սիրոյն մէջ ընդունած այդ անձանօթ աղջիկը թէ կինը՝ շատ լաւ չէր գիտեր, այն ատեն: Գոցեց աչքերը աւելի լաւ պահելու համար մտքին մէջ եղածը հէյ կիտի օրեր կրկնեց, փորձելով յիշել այդ տարիներուն Աթլանթիք Սիթիի կախարդական շաքաթը Յուլիսի սկիզբը, ինչպէս ան ու ինք իրար հալածեր էին իրարմէ գաղտնի, "որտ ուրքի երկայնքին", անհուն ծովուն, երկնքին ու սիրոյ կրակին միջեւ ինկած: Միշտ վերջին վայրկեանին երբ պիտի նայէր անոր, հասկցնէր իր սէրը, ու բառ մը, մէկ բառ միայն, ձայն մը, աչքի դպնալ մը երկվայրկեան մը՝ իրար հանդիպէին նորէն, առաջին անգամուան պէս՝ միշտ փախած էր, անդիմադրելի ուժի մը հնազանդելով: Եւ օր մըն ալ այդ բոլոր իրարանցումը ցնդեր գացեր էր, լքեր էին Աթլանթիք Սիթին իր հարիւրաւոր ժամանցներով, հին հայերով իրենց խորքերդի բարբառով, քաղաքակրթութեամբ վայրենիներու նման կորսուած մեծ քաղաքին ճոխութեան ու շուայտանքին մէջ՝ ու փոխադրուել էին Բոզոնոյի լեռներու սա տգեղ, վիթխարի, ծեր պանդոկը: Հսկայ բազմութենէն միայն հարիւրի մօտ մնացեր էին: Առանց բառ մը ըսելու իրարու՝ երկուքն ալ լեռն էին հիմա ու ծակատազրի մէկ անթափանցելի կարգադրութեամբ նորէն օրը երեք անգամ, ծաշի ատեն, երկու կլոր խոշոր սեղաններու հեռաւորութեան իրար դէմ դիմաց գտնուած էին նորէն: Եւ ամէն տարի նոյն տեղէն շարունակեց էին իրարմէ փախիլ ու իրար փնտռել նոյն խելայեղ ածապարանքով կեանքը կը հատնի կոր... մտածելով, սիրտը ուժգին զարնելով, անկարող տակաւին անոր նայելու բայց անդիմադրելի ուժով մը անոր քաշուած աս անկարելի բան է մտածելով երեխայ չես Մինաս ըսելով մտքէն ու փախելով անկէ որ աւելի կարենար մօտենալ անոր իր առանձնութեան մէջ, երազի մէջէն քալողի մը նման.....:

Մինաս խորունկ շունչ մը քաշեց: Ամբողջ տարին, հանգստեան կոչուածի իր անկիւնը ապաստանած՝ այս չորս օրերուն սպասեր էր, անձկալի ու անհամբեր...: Ու հիմա կը հատնէր ժամանակը, եւ ուրախ էր իր տխրութեան մէջ: Եւ իր էութեան խորքերէն մեծ զոհացում մը կը զգար հիմա, գլուխը քունէն արդէն կախուած, յոյսի եւ ուժի տարօրինակ պաշար մը կար մէջը տեղ մը որ պիտի բաւէր լման տարուան, մինչեւ գալիք Յուլիս: Մէկ օր ալ մնաց կրկնեց ու ոտքի ելաւ:

x x

«Յուլիս 4, Ուրբաթ:
Երրորդ օրն է:

Բացառիկ օր մըն է ահիկա: Առտուն տարօրինակ, մեծ խանդավառութիւն մը կը լեցնէր սիրտս ու սենեակս, թեթեւ ու զուարթ էր ամէն բան, մարդիկ արագ ու փափուկ կը շարժէին շուրջս: Երբ վար իջայ նախաճաշի, բոլորը ինձի կը սպասէին: Տարօրինակ բան է, չեմ հասկնար, երբ առանձին եմ՝ մարդիկ կը փնտռեմ, երբ մարդոց մէջ ըլլամ՝ առանձնութիւնս կը կարօտնամ, իրենց համար ես ոչ կին եմ ոչ ալ աղջիկ, մարմինս գոյութիւն չունի, յիշատակ չեմ ձգեր իրենց մէջ երբ հեռանամ իրենցմէ, գիտեմ, բայց ձեռքս չէ, ես մարդոց մէջ պէտք է ըլլամ, խենթենալիք անօթութիւն մըն է ասիկա... միայն անիկա է որ կը զգայ վիճակս, հեռուէն, առանց ձայնի, վախնալով կարծես կ'ուզէ հասկցնել թէ կը յիշէ զիս օրերով, ամիսներով, տարիներով.....:

Երէկ ամբողջ օր Լուսինեանեմց ու վարդաէսին հետ անցուցի, պարտէզն էինք

յետոյ անտառ զացինք, երգել ուզեցի բայց ոչ որ ուզեց հետս երգել, յետոյ մէկէն տեսայ որ բոլորն ալ անհետացեր էին, կորսուեր էին սենեակները զացի լոպին ալ փնտոցի, ժամը չորսն էր, ո՞ւր գացեր էին առանց ինծի ըսելու՝ չեմ գիտեր:

Երեկոյեան, սենեակս պիտի երթայի յանկարծ տեսայ, կոնակէն, կուզը, տնկած կայներ էր պատուհանի մը առջեւ, դուրսը կը դիտէր: Սառեցայ եղած տեղս: Երբեք առանձին չենք գտնուեր այսքան տարի կ'ընէ. . . .: Բովս սիւն մը կար, ետին անցայ, պահուրտեցայ, չեմ գիտեր ինչու, այնքան զօրաւոր է իմ եւ իր կապը որ վախնամ եթէ դէմ դիմաց ելլենք, իրար նայինք, խօսինք՝ ամբողջ քսան տարիներու մեր զաղտնի սէրը կորսուի երթայ ու տեղը բան մը չի գայ. . . .: Ահաւոր է վիճակս: Որոշեցի տեղէս չշարժիլ: Մեր աչքերը դեռ չեն հանդիպած իրարու, անուներ անգամ չեմ գիտեր, ո՞վ է, ո՞ւր կը բնակի, ընտանիք ունի՞ թէ միս մինակը մարդ մըն է, այնքան կ'ուզեմ թեւերուս մէջ առնել զայն, պաշտպանել, ըսել իրեն որ ամչնալու պէտք չունի բնաւ. . . . իմ սիրտս սիրով լեցուն է իրեն համար, իր տխուր, լուռ, առանձին, անտեսուած, լքուած մարդու հոգիին համար. . . .:

Վաղը վերջին օրն է, գոնէ մէկ անգամ առջիս կայներ, խօսէր իր տխրութենէն, ձայնը լսէի մօտէն եւ պատմէի իմ մասիս, քսան տարի կ'ընէ որ կ'ուզեմ բանալ սիրտս, մէջը առնել զինքը, չեմ համարձակիր, եթէ մերժուի. . . .: Բայց շատ ամչկո՞տ է թէ կը վախնայ կոր ինծմէ, պատանիի մը պէս կը փախի կիներէն, մարդիկ ալ չեն նշմարեր զինքը, կիներուն համար ստուեր մըն է, ուրուական մը. . . . Այսպէս շուարած կայնած էի սիւնին ետին՝ յանկարծ տեսայ որ հոն չէր, գացեր էր, փախեր էր ինծմէ: Ես միայն մէկ երկվայրկեան կ'ուզեմ տեսնալ, նայիլ իր աչքերուն որ տեսնէ զիս, հասկնայ որքան կը սիրեմ զինքը, որքան սպասեր եմ այդ վայրկեանին, արթուն թէ քուն՝ երագած եմ ատանկ անկարելի պահը՝:

Աղաւնի վար դրաւ գրիչը: Կրակ ինկած էր այտերուն ու կուրծքին, քրտինք ծածկեր էր ծակատը: Առանց մտածելու, ոտքի ելեր էր ու գացեր պատուհան, բացեր էր դժուարութեամբ: Զով ու թարմ օդը սթափեցուց զինքը իմա: Անշարժ մնաց լուսաւոր, տարածուն ու դողդղուն գիշերուան դիմաց, կրկնելով ինչ խենթ աղջիկ եմ մինչեւ որ կորսուեցան քաղերը ու մնաց զուարթ, թեթեւ տրամադրութիւն մը: Անիմաստ ժպիտ մը եկաւ դէմքին, կամաց մը ետ տեղը գնաց, նստաւ անոռին, ձեռք առաւ գրիչը բայց մնաց անշարժ: Յանկարծ զոցեց օրագիրը, հապճեպ հանուեցաւ մուկին մէջ եւ անկողին մտաւ:

Բաւական ատեն արթուն մնաց Աղաւնի, ինքզինքը յանձնած խառնակ մտածումներու եւ զգայնութիւններու տողանցին: Երջանիկ եմ ըսաւ ինքնիրեն եւ արդէն քունը տարեր էր զինքը:



Նախ փորձեց լուսանկարը հանել իր տեղէն, բայց փակած էր թուղթին: Անգամ մըն ալ նայեցաւ անոր ուրախ դէմքին, մատը մեղմօրէն վրայէն անցուց, կամաց մը զոցեց էջը եւ ալպոմը գրկած՝ մնաց նստած տեղը, միտքը քաղցր ու տրտում պատումով մը լեցուած: Գիտէր թէ վերջին օրէն էր բայց չէր կրնար ընդունիլ մտածումը թէ յաջորդ օրը ետ ֆիլատելֆիա պիտի քաշքշէր քայլերը, իր պզտիկ, զոց առանձնութեան չոր գետնին վրայ, առանց բարեկամի, առանց մարդկային ներկայութեան:

Ատեն մը վերջը ոտքի ելաւ, ալպոմը ըստգին կուրծքին սեղմած, անկարող անկ բաժնուելու, բայց չուզելով դուրս հանել իր սենեակի ապահովութենէն: Այն վայրկեան կնկայ առտուայ մտտ, ծանր խնդուքի ձայն մը եկաւ ականջին դուրսի նրբանցքէն, անզգալաբար քալեց դէպի դուռ, անաղմուկ, գրեթէ զաղտագողի դուրս ելաւ ու անշշուկ հետեւեցաւ նախաճաշի զացողներու խուժքին:

Երբ ճաշարան հասաւ, ալպոմը իր ամբողջ ուշադրութեան ու հոգածութեան առարկան եղեր էր: Աւելի ուժով սեղմելով զայն, խառնուեցաւ սեւամորթ պատանիներու աղմկոտ, համարձակ, անկարգ բազմութեան մը որ առտուն եկած ըլլալու էր: Փորձեց ոտքի մատներուն վրայ կայնիլ ու հեռուէն իր ու դիմացի սեղանը տեսնել, բայց կարծ էր հասակը: Շարքի անցաւ ի վերջոյ, մարդկային հոսանքը հոս հոն հրեց զինքը ու քայլ քայլ հասաւ ուտելիքի մեծ սեղան: Փորձեց իր ամեն . . .

օրեայ նախամաշը առնել ու սեղան երթալ: Սակայն ազատ չէին ձեռքերը օմլէթը, հացն ու կաթի գաւաթը բռնելու համար: Քիչ մը շուար, պզտիկ խուճապի մը եզերքը՝ պարապ սեղան մը նշմարեց քիչ մը անդին: Շուտ պէտք էր որոշէր -- դուրս ելաւ շարքէն, իր սովորութեան հակառակ, մեղքեց բազմութիւնը, մեծ զգուշութեամբ ալպոմը տեղաւորեց սեղանին եզերքը ու նոյն արագութեամբ ետ տեղը գնաց: Մէկ աչքը ալպոմին՝ օմլէթի պնակը լեցուց ու կաթը պիտի առնէր երբ ճաշողներու նոր ալիք մը եկաւ լեցուց իր շուրջի տարածութիւնը, հրեց զինքը առաջ, յետոյ ետ: Մտահոգ ետին նայեցաւ բայց իր ալպոմին սեղանը չէր տեսնուեր, կորսուած ամէն կողմէ խնդացող խօսող դէմքերու ետեւները: Չգեց տեղը, ետ շարժեցաւ ու յանկարծ երկու կին գոցեր էին ճամբան: Արմուկը զարնուեցաւ մէկէն աջին կայնած գիրուկ կնկան, վար ինկաւ պնակը ձեռքէն, ծոցեցաւ որ հաւաքէ՝ ետեւէն մարմին մը հրեց զինքը, կորսնցուց հաւասարակշռութիւնը, վար պիտի իյնար՝ մէկը բռնեց թելէն:

- Oh, sorry; sorry, mister.

Բառերը թափեցան բերնէն, մոռցաւ գետին ինկած պնակը, մէկը բաներ մը ըսաւ իրեն, ետ նայեցաւ, մէկը հրեց զինք, նորէն պիտի իյնար:

- My book, please, my book.

- You all right?

- Yes, yes . . . no, no.

Աչքերը լայն բացած, շփոթած ու խղճալի՝ դէմքերուն նայեցաւ սակայն ոչ ոք կը թուէր նշմարել զինքը: Հիմա առաջ նետուեցաւ, մեղքեց մարմիններու պատրել ալպոմին սեղանը առաւ շունչը: Ութ պատանիներ նստեր անհոգ, ուրախ նախամաշ կ'ընէին: Ալպոմին հետքը չկար: Վախը փորը էն մօտինին խօսեցաւ:

- My book, black album, was here on the table.

- What? What's he saying?

- My album. I put it here; you have seen it?

- No album, mister.

- Yes, yes, my black album. Oh my God, where is it?

Խուճապահար՝ անշարժացաւ, անկարող որեւէ արարքի: Բրտինքը կոխեց ու տկար զգաց ոտքերուն վրայ մինչ լացի յուզում մը կը խցէր կոկորդը ի՞նչ պիտի ընեմ Աստուած իմ կրցաւ մտածել ու վեր նայեցաւ: Այն ատեն էր որ իրենց սեղանին սեւամորթ սպասեակը ձէրի նշմարեց զինքը, քովը եկաւ, թաթը ուսին դրաւ, վար ծոցեցաւ ու հայրական շեշտով խօսեցաւ:

- What is the matter?

Կամաց կամաց քակուեցաւ բերանը ու կցկտուր բացատրեց եղածը:

- Don't worry. I'll find it, go sit in your place.

Ճէրիին ձայնը ու հասարակ բառերը անուշ, պաղ խաղաղութիւն մը բերին: Սեղմեց մարդուն դաստակը, խնդաց ներսէն պողթկացող ուրախութենէն, բաներ մը մոլտաց ու կաթի գաւաթը ձեռքը իր աթոռին վրայ ինկաւ, բոլորովին ուժաթափ: Միայն բանի մը վայրկեան ետքն էր որ, անկարող ինքզինքը զսպելու՝ վերցուց գլուխը ու շիտակ Աղաւնիին աթոռին նայեցաւ: Պարապ էր:

Պաղ ջուր թափեցաւ վրան: Չէր կրնար հաւատալ: Նորէն աչքերը հոն զացին, պտտեցան շուրջը առաջին անգամ ըլլալով: Չկար այդ գլուխը իր սեւ մագերու դէզով, այդ բարձր, պայծառ, խնդացող ձայնը չէր լսուեր: Հոն էին անոր բոլոր բարեկամները, աղմկոտ, իրենց անվերջանալի բահբահով ամբողջ ճաշարանը լեցնող, աշխարհին տէր ու տիրական Աղաւնին բոլորովին մոռցած, այդ վարդգէսները, լեւոնները, Միսաբները եւ Կէրիները հոգ իսկ չէին ընել թէ ո՞ւր է զիրենք շէն, երջանիկ պահող միակ անձը: Իբրեւ թէ ան բնաւ հոն չէր եղած իրենց մէջ: Բարկութիւնը աւելի պրկեց ջիղերը եւ գիտէի ատանկ սրիկայ ըլլալնին ըսաւ ինքն-իրեն հոգերնին չէ թէ ուր է ինչ կ'ընէ Աղաւնին: Սրդողած մարդոցմէ, կախեց գլուխը, գոցուեցան աչքերը, կբեցաւ մարմինը:

Ատեն մը ետքը, մէկու մը ներկայութիւնը զգաց , քովը կայնած: Վեր նայեցաւ: Ճէրին էր:

- You sleeping, Mister?

Հիասկզբաւ: Ճէրին աւելի վար ծոցեցաւ, գործանք աչքերուն մէջ:

- No, no.

Մարդուն երեսը շարունակեց նայիլ, չհասկցած անոր հոն , գլխուն վրայ կանգնելուն պատճառը: Ճէրի կը սպասէր, դէմքին հարցական արտայայտութիւն մը: Յանկարծ տեսաւ իր ալպոմը, գոց կապոյտ ու մաշած՝ անոր խոշոր, սեւ մատներուն մէջ: Ոտքի ցատկեց ու ձեռքերը կառչեցան ալպոմին ու գրեթէ խլեցին զայն մարդուն ձեռքէն:

- Oh thank you, thank you. Yes, this my album, thank you ...

Բառերը խեղդուեցան կոկորդին մէջ, արցունք կար աչքերուն ու չկրցաւ շարունակել: Ալպոմը հիմա սեղմած էր կուրծքին եւ այնքան զօրաւոր կը զգար ինքզինքը որ պէտք չկար որեւէ շարժումի, պիտի խնդար ուրախութենէն բայց զհամարձակեցաւ, ու մնաց եղած տեղը, ժխորին անգիտակից: Մարդը նորէն բան մը ըսաւ իրեն բայց չհասկցաւ, կարեւոր ալ չէր ոչինչ կարեւոր է հիմա հոս անցաւ մտածումը մտքէն պէտք է ելլեմ հոսկէ շարունակեց, աչքերը վերջին անգամ դիմացի սեղանին կողմը գացին Աղաւնին, Աղաւնին ո՞ւր է, ո՞ւր է անցաւ միտքէն բայց արդէն ոտքերը շարժէին դէպի դուռ ուր բազմութիւնը դեռ խոնուած էր: Աղաւնին հետքը չկար ճէրին կը գիտնայ անցաւ մտքէն բայց ան ալ կորսուած էր բազմութեան մէջ որ կը շարունակէր ներս հոսիլ հեղեղի նման Աղաւնի... Աղաւնի կրկնեց առանց զայն փնտոելու այլեւս: Բայցերը զինքը դուրս, լոպի տարեր էին:

Ամէն օրերու աղմուկը, իրարանցումը, ամէն տարիքի ու ազգէ մարդ, կարծ տափատով պառաւներ, ամէն կողմ սեւամորթ, ամէն մարդ մէկու մը հետ խօսելու վրայ, ամէնքն ալ շատ զբաղած ու կեանքի անզսպելի, խառնիխուռն շարժումը ու միայն ինք աւելորդ էր, անծանօթ եւ օտար էր աշխարհի երեսին, ինքը, իր ալպոմը եւ յիշողութեան եզերքը՝ Աղաւնին ձայնը ու տարտամ բայց հեռաւոր երեւոյթը: Ժխորին եզերքը պարապ բազկաթոռ մը նշմարեց: Սիրտը ծանր , տրտում բայց մեղմ լոյսի մը մէջէն տաքցած, ջիղերը յոգնած՝ քալեց դանդաղօրէն դէպի գիրկը կանաչ, կակուղ, միայնակ բազկաթոռին:

Որքա՞ն մնաց ինքնիր գիտակցութեան խոզակին մէջ ապաստանած, մեկուսացած իրեն անբարեկամ մարդոցմէ: Հգիտցաւ Մինաս , եւ իրեն այնպէս թուեցաւ թէ իրմէ հզօր ուժ մը կու գար իրեն կուրծքին փակած ալպոմէն, եւ որ տէրը դարձեր էր իր շարժումներուն: Ոտքի ելեր էր արդէն ու կը քալէր, կը տարուէր դէպի մայր դուռը: Աճապարուած , ոսկեզօծ գլխարկով եւ համազգեստով մարդ մը զարնուեցաւ իրեն, բազմութեան հետ հիմա կը շարժէր եւ ուժ կ'առնէր անոր հոսանքէն: Դուռ հասեր էր երբ թեւանցուկ, երիտասարդ գոյգ մը խնդալով, համբուրուելով անցաւ իրմէ եւ անտառ ուղղուեցաւ: Տաք, անծանօթ զրգիռ մը սարսուաց թեւերուն ու վզին շուրջը, առանց ուզելու դուրս ելեր էր պանդոկէն: Սիրահար գոյգը չէր երեւեր, բայց Մինաս յանձնուեցաւ իրմէ մեծ ուժին ու քալեց դէպի անտառ:

x
x x

Աղաւնին կանուխ արթնցաւ այդ առտու:

Աչքը բացաւ՝ անակնկալի մը գաղափարը մեղմ անձկութիւն մը դրեր էր սրտին ուրիշ օր է այսօր անցաւ մտքէն վերջին օրը միշտ չսպասուած բաներ կ'ըլլան շարունակեց այս գիշեր խնձոյք կայ ու յիշեց ամէն տարի կրկնուող փակման հանդէսը, ձերուութեան դռները հասած մարդոց բռնի խնդուքը, ուրախութեան ու քէֆի խոպոտ ծիչերը, ծափահարութիւնները ես ալ անոնց մէջն եմ անցաւ մտածումը Աղաւնի... Աղաւնի... պիտի պոռային մինչեւ որ բեմ ելլէր ժանգոտած ձայնով երգէր հայկական քանի մը մեղեդիները որ դարոցէն կը յիշէր տակաւին, ու անոնք նորէն, ամէն տարուայ պէս, նորէն Աղաւնի, նորէն պոռային արդէն քունը գլուխին մինչ ինք պիտի վերջին ճիգ մը թափէր երգը յիշելու, ձայնը գտնելու թաղուելու, վերջին անգամ վարդազէսի եւ միւսներուն ձրի, սուտ բայց ուրախութեան նմանող ծափահարութեան մէջ...:

Հայելիին առջեւն էր, եւ երբ նայէր ինքզինքին՝ միշտ այդ մարդուն

մտածումը կու գար մտքին, իր յանցաւորի, պատժուածի արտայայտութիւնը, մարդոց-
մէ դուրս նետուած, անօգնական կերպարանքովը ես եմ իր միակ յոյսը մտածեց
հիմա ինծի համար կու գայ կոր հոս ամէն տարի եւ այս տարի ալ, եւ գալ տարի
ալ..... պէտք է հասնիմ իրեն, միակ սէրն է որ մնացած է ինծի համար աշխարհի
մէջ, պէտք է հասնիմ սիրելի չի բաւեր:

Սենեակը լուռ՝ կը սպասէր իրեն: Մտիկ ըրաւ իր շնչառութեան, աջ ձեռքը
սահեցուց անկողնին ոտքի տախտակին վրայէն, գնաց պատուհան ու նայուածքը սառե-
ցաւ դուրսի ծառերու առտուայ անդորր հսկումին վրայ, յետոյ ձայներ եկան
նրբանցքէն ու յիշեց անոր կերպարանքը, լուռ, աննշան կենաքը ու իրեն այնպէս
թուեցաւ թէ կեանքին մէջ միայն ան ունէր իր հետ տարիներէ ի վեր, իր ուսուցչի
տափակ գոյութիւնը մարդկային տաք, մուծ, ապրող սրտի մը միացնող, թէ միայն
ան էր որ կը պակսէր հիմա իր վախը, ծածուկ անձկութիւնը հասկնալու քսան տա-
րիէ սպասեր եմ անցաւ մտքէն քսան տարի կրկնեց, դարձաւ սենեակի մտերիմ տես-
քին: Արդէն տրամադրութիւնը կը փոխուէր պէտք է տեսնեմ այսօր, անպայման, վարն
է, իր տեղը նստած, ինծի կը սպասէ կոր:

Քալեց հայելիին: Ուրախութիւն մը կար դէմքին վրայ, փայլուն թուղթէ թիթեռ
նիկներու նման մատները արագ, թեթեւ դպան մազերուն, հագուստը շտկեց, կլոր մը
դարձաւ կրունկին վրայ սենեակը իր հետ առնելով ու լեցնելով աշխարհի տարածու-
թիւնը: Երգ մը մոլտալով դուրս ելաւ սենեակէն, արագ արագ քալեց տարտամ ժպիտ
մը երեսին: Մարդ մարդասանք չկար մէջտեղները: Նոյն թափով հասաւ ծաշարան:
Գոց էր դուռը: Երկու մոկեր աղջիկներ պահակ կը մտնէին քրտնած, հեւասպառ,
նոր յաճախորդի մը օթոն եկաւ ու փայլուն, ոսկի կօծակներով երիտասարդներ
սկսան պարպել պայուսակները: Եռուզեքը կը շատնար.....: Կոնակը պանդոկին ան-
զուսպ կեանքին, թեւերը խաչածեւ՝ անտառին դարձաւ եւ այն զգացումը ունեցաւ
թէ զաղտնի ձայն մը զինքը դէպի անտառը կը կանչէր: Երբեք մինակը չէր պտտած
անտառին ներսերը, եւ հիմա, առտուայ թափանցիկ, վճիտ լոյսին մէջէն բարի, անմեղ
երեւոյթ մը առած էին նիհար, դողդողուն ծառերը, քնացած թուփերը:

Յանկարծ ետեւէն հաւաքական խնդուքի աղմուկ մը հասաւ մարդիկը սկսեր
են արթննալ, պիտի ապրին մտածեց ու գրեթէ գիտէր անոնց ով ըլլալը, ինչու
խնդալը այդքան բարձր ու միատեղ: Իր ծանօթ, անվնաս, չէզոք աշխարհն էր,
միակը որ ունեցեր էր կեանքին ընթացքին, բայց որ հիմա, այս վայրկեան, տարօ-
րինակօրէն սուտ ու օտար թուեցաւ իրեն: Սուտ է կրկնեց միտքէն այսօր չեմ
ուզեր այդ մարդիկը, չեմ կրնար քովերնին երթալ, անկարելի է, եզրակացուց
Տեղէ մը մէկը Աղաւնի կանչեց կէս-մտերիմ շեշտով էտին է մտածեց ու երկվայր-
կեան մը տեսաւ անոր քրտնած մսոտ երեսը, կեղծ ակօսները, ներկուած մազերը
Աղաւնի..... չե՞ս գար նախաճաշի նորէն լսեց, աւելի մօտէն: Ակամայ ամապարանք
մը ինկաւ սրտին, քայլ մը վար իջաւ: Նոր օթօ մը եկեր էր մուտքին առջեւ ու
մարդիկ կը վազվզէին շուրջը: Արագ մը մարդոց խառնուեցաւ, օթոյին ետեւը անցաւ,
Քիչ մը անդին՝ հսկայ թուփերը, սեւ կին մը կայներ էր, աննպատակ: Շարժեցաւ
դէպի հոն, թուփերուն կոնակը անցած էր: Երկվայրկեան մը պահուրտեցաւ հոն,
յետոյ վազեց կտրեց մուտքի դարպասը, ձախ դարձաւ եւ արագ արագ, առանց ետին
նայելու, հեռացաւ պանդոկէն, հասաւ անտառին եզերքը, աջ թեքեցաւ ու մտաւ
անտառէն ներս: Աղմուկը արդէն հեռացեր էր -- շունչը բռնած՝ ծառի մը կոթնեցաւ,
գոցեց աչքերը, սպասեց:

Ատեն մը ետքը քալել սկսեր էր, աննպատակ պտտելով ծառերուն մէջերէն ու
տակաւ մտնելով անտառին ներսերը, ծառերուն ու թուփերուն դպնալով, քսուելով
եւ անոնց հպումէն նոր եռանդ մը զգալով մարմնին, գիտակցութեան մէջ: Զհասկցաւ
սիրտը ինչու ուժգին կը փափախէր ու հիմա խոնաւ, միթիւն թաւուտք մը գոցուեցաւ
շուրջը ու կօշիկին շխրտուքը թաց խոտին ու տերեւներուն մէջէն երկրորդ անձի
մը շշուկին տպաւորութիւնը ըրաւ վրան: Աղաւնի անշարժացաւ, բռնեց շունչը,
բայց աղմուկը բնութեան մէջ կը շարունակուէր: Զորս կողմը արագ մը նայեցաւ,
մարդ չկար, բայց գիտէր որ առանձին չէր.....: Յետոյ առջեւներէն, տեղէ մը՝
մարդկային քայլերու աղօտ ձայն մը եկաւ ականջին: Սառեցաւ մարմինը -- գիտէր,
գիտէր: Աչքերը լեցուեր էին արդէն, կը թուլնային սրունքները, բան մը կը
խցէր կողորդը: Զկրցաւ գլուխը ձայնին կողմը դարձնել:

-- Ան է:

Վախի, ուրախութեան ու սիրոյ ալիք մը լեցուց զիտակցութիւնը: Արցունք մը ինկաւ դէմքին որ ճմովկուեր էր ուրախութեան ու շուարումի մէջ մինչ սառի զգայնութիւն մը սողաց ողնասիւնին երկայնքին: Որքա՞ն մնաց այդ անձուկ հրճուանքի վիճակին մէջ՝ բնաւ չզիտցաւ՝ երբ ոտքի շխրտուքը եկաւ կոնակէն ու իր մօտ կանք առաւ՝ Աղաւնի սարսափահար ու ինքնամոռաց, զգաց իր աջ ձեռքին առաջ շարժիլը կոթնելու քովի ծառին:

-- Օրիորդ Աղաւնի

Չայնը մեղմ, ծանր, անուշ՝ պայծառ երկինքէ մը ինկած հրաշք մըն էր իրեն համար: Չհասկցաւ, չհաւատաց թէ ինքն էր անունը: Պիտի դառնար անոր կողմը երբ զգաց թէ պաղ մատներ դաստակը բռներ էին:

-- Օրիորդ Աղաւնի:

Երկրորդ անգամ նոյն շեշտն ու քաղցրութիւնը կար ձայնին մէջ, բայց հիմա մարդու դէմքը կար առջին: Ան էր -- իր տխուր աչքերով, կքած իր մարմնին մէջ, թեւին տակ սեւ գիրք մը սեղմած, աննշան՝ այդ բարձր ու մոայլ ծառերուն տակ: Սիրտը սիրով յորդուն, փսփսաց

-- Այո:

x
x x

Խոշոր, մամոռտ կոճղին վրայ նստան քով քովի, նայուածքները կորսուած հեռուն անտառին ծոցը, ու երկար առեն լուռ՝ իրենց շնչառութիւնը միայն մտիկ րրին: Յետոյ, դողացող մատներով, Մինաս բացաւ սեւ ալպոմը ու զուսպ, մեղմ ձայնով պատմեց իր կեանքին քանի մը պատկերները: Երբ հասաւ խմբական մեծ պատկերին, ձայնը խոռվեցաւ, լեցուեցան աչքերը, վերցուց ալպոմը ու պատկերին վրայ Աղաւնիին դէմքը համբուրեց, երկար, անձայն համբոյր մը...: Յետոյ, անտառի խնդաղը լռութեան մէջ, քով քովի նստած, երկար ճնացին, իրարմով ծարաւ ու յագեցած

Աղաւնիին թաշկինակը դէմքին տարաւ, չորցուց արցունքը, յետոյ խնդաց, կարճ, ջղային:

-- Ասիկա... տղայական է, բայց սրտիս շատ մօտ է:

-- Չեմ ուզեր որ լաք Օրիորդ:

-- Ինձի օրիորդ մի կոչէք, ես Աղաւնիին եմ:

-- Գիտեմ:

Ծանր լռութիւնը ետ եկաւ: Սարսուռ մը անցաւ երկուքին վրայէն:

-- Պա՞ղ է:

-- Չէ, դո՞ւք:

-- Չէ չէ, լաւ եմ:

Մինասին ձեռքը շարժեցաւ իր ծունկին վրայ, մօտեցաւ աղջկան ձեռքին, յետոյ անշարժացաւ: Խցուեր էր կոկորդը, յստակ չէր շուրջի պատկերը ու գլուխը ամբողջովին պարպուեր էր մտածումէ ու բառէ: Թռչուն մը տեսաւ քիչ մը հեռուն, ժայռի մը կոնակին, ուրախացաւ, կամաց մը աջ, աղջկան կողմը դարձաւ ու պայթեւ լու աստիճան սիրելու անսահման, պղտոր փափաք մը լեցուց կուրծքը: Շուարած, աչքերը լայն լայն բացած Աղաւնիին նայեցաւ իր ամբողջ զիտակցութեամբ, առաջին անգամ ըլլալով:

-- Գիտէի թէ հոս էիք:

Պատասխան չունէր ի՞նչ պիտի ըսեմ հիմա մտածեց, ու լռեց, աչքը գետին:

-- Աստուած վկայ:

Սեւ մազերու գունտին մէջէն պզտիկ, կայծկլտուն աչքերը իրեն դարձան բան մը ըսէ Աղաւնի բառերը անցան միտքէն, ես սիրելի չեմ գիտեր:

- Ի՞նչ է քու անունդ:

Աղաւնի իր բնական, տաք շեշտը գտեր էր, բայց յանկարծ զգաց թէ շատ բարձր ելեր էր ձայնը, ճիշդ պանդոկի ճաշարանի ու քէֆերու իր շեշտը: Մինաս կը լուէր սակայն, նայուածքը իրմէ անդին, ծառերուն մէջ կորսուած: Անզգալաբար ժպիտ մը եկեր էր դէմքին վրայ, հին հին սովորութեամբ, բայց Մինաս դեռ չէր պատասխաներ մինչ իր մէջէն յարգի բան մը կը պարպուէր, կը կորսուէր լուութեան մէջ, ըսելիքը կը հատնէր ու սէրը տակաւին չէր պատմած, աշխարհին չափ ըսելիք ունէր որ բառերուն հետ կորսուէր էր: Խուճապի մը սկիզբը զգաց գլխուն մէջ:

-- Այնքան շատ բան ունիմ քեզի ըսելիք, բայց հիմա մէկէն մէկ, բան մը չկայ լեզուիս վրայ:

-- Անունս Մինաս է, Մինաս Պալըքմեան:

-- Մինա՞ս, ահ գիտէի, ըսեր էին ինձի... տարիներով պատմելիք բան ունիմ, չի հատնիր, աշխարհը կը հատնի՝ ըսելիքս չի հատնիր:

Աղաւնի խնդաց, կարճ, մեքենական:

-- Ես ալ:

-- Ամէն տարի հոս էիր, չէ՞, նոյն աս պանդոկը, նոյն սենեակը, նոյն աթոռը վարը ճաշարանը:

-- Այո, տասը տարի:

-- Անկէ առաջ ալ, Աթլանթիք Սիթի, չէ՞... Ես ալ:

-- Այո:

-- Գիտէի որ դուն ալ կու գայիր... Ես ալ կու գայի:

-- Այո:

-- Ես ալ... աղուոր պանդոկ է:

Չեռքերը կը շարժէին հիմա ազատուած անյայտ արգելքէ մը, բառերը գիրքը կը հրմշտկէին լեզուին վրայ, ակամայ կը խնդար...: Յանկարծ զգաց թէ Մինաս իրեն շեշտակի կը նայէր, դող մը ինկած էր մարմնին մէջ, բերանը բացած՝ բան մը պիտի ըսէր իրեն, շատ ստիպողական, անզսպելի բան մը: Իսկոյն լոեց:

-- Աղաւնի...

-- Այո:

Սակայն լոեց, աչքերը վար, շրենչը բռնած: Զրտինքը նորէն կը փայլէր ճակատին: Հիմա նորէն վեր նայեցաւ իրեն, անգոյն շրթունքները շարժեցան:

-- Օրիորդ Աղաւնի, Ես.....:

Չկրցաւ շարունակել: Գոցուեցան աչքերը:

-- Ի՞նչ է Մինաս:

Գլուխը աջ ու ձախ շարժեց՝ անկարող ամէն վայրկեան մտքէն կրկնած բառը անոր ըսելու մէկ անգամ իսկ, ցած ձայնով, անդին նայելով, մինչ իր ներքին կործանումին ու լուռ հեկեկանքին արձագանգը կը թուէր հասնիլ Աղաւնիին ու շարժել գուլթի ծանր ալիքները որոնք հիմա ողողեցին աղջիկը: Ժիգ մը ըրաւ զսպելու ինքզինքը բայց Մինասին անանուն ցաւին ու սիրոյն անկեղծութիւնը ցնցեց զինքը: Երբեք այնքան հարազատ, զօրաւոր, իր էութեան խորերէն եկող զգացում չէր ապրած: Սէրէն ալ ուժով՝ գուլթը այդ վիրաւոր, խոցելի մարդուն համար աւելեց տարաւ ամէն

բան իր առջեւէն: Ու մինչ Մինաս կը կորսուէր ինքնիր մէջ, կը սայթաքէր անգոյ բառերու կամ մէկ բառի, մէկ շփոթ իմաստի ու սիրոյ անյագելի կարօտէն, անկարող լալու կամ խօսելու Աղաւնի կը փլէր ինքնիր մէջ.....: Ափերով գոցեց դէմքը մարմինը ակելի կծկուեցաւ ու պզտիկցաւ, վար հակեցան նիւար ուսերը մինչ տարիներու կուտակուած սիրելու պահանջը, մարդկային էակ մը գրկելու, իր սրտին մէջ պահելու, գգուելու անվերջ անսկիզբ՝ նուաճեց իր ամբողջ էութիւնը: Բայց ձայն չելաւ անոր բերնէն ոչ ալ ողբի որբէլէ շեշտ: Ատկէ ետք ոչ մէկ բառ լսուեցաւ, ոչ Աղաւնի ոչ ալ Մինաս գիտցան ինչ տեղի ունեցած էր իրենց կեանքին մէջ այդ հին կոճղին վրայ:

Անխօս ու շուարած, ետ պանդոկ գացին:

×

×

×

Բոզոնոյի Հայկական Եւրթուան վերջին ընթրիքը միշտ կէս-պաշտօնական բնոյթ մը ունեցած էր, «շորթերը» ու «պլու-ճինգերը» կ'անհետանային, հոս հոն նոյնիսկ բաճկոն ու փողկապ կը տեսնուէր, կիներու պոռոտ գոյներով տափատները հիմա սեւի կը մօտենային, մագերու եւ դէմքի խնամքը զգալի կը դառնար բայց խնդուքի եւ խօսակցութեան աղմուկը կը շատնար: Ծաշէն ետք՝ կու գար պարահանդէսը, նոյնքան զուսպ սկիզբները մինչեւ որ հայկական շուրջպարի գլխաւորաբար կիներու շղթան բակուէր, ոլորուէր, երթալով երկննար, ժխորը ակելնար եւ վերջապէս խժալուր իրարանցումը նուաճէր սրահն ու պարող, ցատկոտող, մրափող բազմութիւնը:

Մինաս նստած էր իր հին տեղը ու գլուխը կախ՝ կը սպասէր իր ճաշին: Իր աջին Պարոն Աւետիսը կնկան ձեռքը բռնած կը սպասէր իրեն նման, անոնց քովը կէս-արթուն ծերունի մը, ուրիշներ ստոած պաշտօնականութեան մէջ, ձախին ճաղատ մարդը դեռ չէր եկած, երկու հոգի պշնած՝ անորոշ տեղ մը կը նայէին: Ոչինչ փոխուած էր կեանքէն:

Մինաս քով ծոցեցաւ ու աչքին պոչովը նայեցաւ դիմացի սեղանին: Աղաւնիին խնդուքին ձայնը հասեր էր ականջին: Զգաց թէ Պարոն Վարդգէսին հետ իր կատակներ ու սրամտութիւնը սկսեր էր: Մինաս վար առաւ նայուածքը: Բսան տարի այդ անիրական աղջկան շուրջը՝ հետապնդեր էր սրտատրոփ որ կարելի է օր մը նայէր անոր վառվռուն դէմքին, կամ նոյնիսկ բառ մը փոխանակէր հետը: Ականջ տուաւ անոր սուր, պայծառ ձայնին ու իր ներսէն գաղտնի հրճուանք մը զգաց: Ախ, մէյ մը նայէ իմ կողմս անցաւ մտածումը քեզի ասանկ պիտի սիրեմ ամբողջ կեանքովս, բայց դուն պիտի չգիտնաս, բնաւ: Զհասկցաւ ինչու՝ բայց զգաց թէ երջանկութեան հագուազիւտ պահերէն մին էր այդ վայրկեանը: Այդ պահուն ձերին բերաւ պնակը եւ ինք սկսաւ ուտել: Կեանքը կը յորդէր ջորս կողմէն, պնակներու, խօսակցութեան ուրախութեան ծիչերու ժխորին մէջ մարդիկ ու կերակուրը դժուար էր իրարմէ զանազանել: Տարուած համատարած ախորժակէն, Մինաս կերաւ, կերաւ.....:

Աղաւնի վերցուց գլուխը պնակէն -- հոն էր մարդուն կիսադէմը, ինչպէս եղբ էր տարիներով, ճակատագրէն զարնուած, տառապած, անհրապոյր՝ բայց խորապէս մարդկային, անձանօթ զգացումներ արթնցնող իր մէջ:

- Տիգրան, բաժակ մը գինի կու տա՞ս:
- Աղաւնի, դուն ե՞րբ գինի խմեր ես որ, աս ի՞նչ եղաւ մէկէն, հէ՞:
- Այսօր տօն է:
- Ինչի՞ տօնը:
- Զեմ գիտեր, անանկ կը զգամ կոր, ե՛ւլլա, բեր սա շիշը:
- Լաւ լաւ:

Առաջին գաւաթէն արդէն գլուխը տաքցեր էր: Մէկը պոռաց աղմուկին մէջ:

-- Աղաւնի, պզտիկ երգ մը, ինչ կ'ըլլաս, սիրոյ մասին:

-- Չէ չէ, ատենը չէ:

-- Արտասանութիւն մը այն ատեն:

-- Վերջը, ճաշէն ետք, խնճոյքին ատեն:

Գաւաթը ձեռքը, վեր նայեցաւ մէկէն ու իրեն այնպէս թուեցաւ թէ մարդը նոյն երկվայրկեանին իրեն կը նայէր, իր գաղտնի անկիւնէն: Հրճուանքը ողողեց սիրտը: Քիչ մը վերցուց բաժակը ու մոլտաց՝

-- Աս ալ քեզի, անճանօթ մարդ, գալ տարի նորէն հոս կ'ըլլանք, վստահ... կեանքըս քեզի տուի, բայց չեմ գիտեր թէ ո՞վ ես, ի՞նչ է անունդ... միայն գիտեմ որ կը սիրես զիս... ու պիտի սիրես մինչեւ կեանքի վերջը ... կենացդ:

Ետ վար դրաւ բաժակը:

-- Աղաւնի, լսե՞ր ես աս մոքը....

Անժէլն էր նորէն, անոր դարձաւ ու սեղանին շուրջը ցատկոտող քէֆի տրամադրութիւնը թափեցաւ վրան, վարակեց զինքը եւ առաւ տարաւ....:

Դեռ կէս ժամ մըն ալ շարունակուեցաւ խրախմանքը մինչեւ որ ճաշարանը սկսաւ պարպուիլ, աղմուկը իջաւ, սպասեակները աւելի դանդաղ կը շարժէին հիմա, հին, ուռած մարմիններ խարխուլ քայլերով դէպի դուռ շարժեցան: Ո՞ւր է, ո՞ւր է խելայեղ հարցումը յանկարծ պլլուեցաւ իրեն, չորս դին քննեց, անցաւ լոպի, պահ մը կայնեցաւ աթոռի մը կողմնած, սպասելու նման: Ետոյ

-- Աղաւնի, չե՞ս գար կոր պարահանդէսին:

Ետին դարձաւ: Հեռուն վարդգէսը նշան կ'ընէր իրեն:

-- Չէ, չէ, այս տարի սիրտ չունիմ....:

Երբ լոպին մարդ չէր մնացած, զգոյշ քայլերով ուղղուեցաւ վերելակին դուռը: Գլուխը կը դռնար, բայց յաջողեցաւ աննկատ հասնիլ իր սենեակը: Քիչ մը երկնցաւ անկողնին վրայ, մտիկ ըրաւ սրտի ուժգին զարկին, յետոյ մեծ դժուարութեամբ անցաւ բաղնիք, երեսին պաղ ջուր սրսկեց, գնաց պատուհան, սակայն չբացաւ: Գլխու մեղմ պտոյտին մէջէն աշխարհը աւելի անիրական, հեռու թուեցաւ իրեն ի՞նչ գործ ունիմ հոս ըսաւ ինքնիրեն, խնդալը եկաւ վարը կը պարեն կոր ես ալ հոս, մինակս....: Այն ատեն էր մարդուն մշուշոտ պատկերը եկաւ աչքին, ետ սենեակ դարձաւ, գնաց պզտիկ սեղանին քով, հանեց օրագիրը, նստաւ, բացաւ էջը, անշարժացաւ: Բանի մը վայրկեան մնաց այդ դիրքով, յետոյ գրիչը առաւ ու կամաց կամաց գրեց:

«Յուլիս 5, Շաբաթ:
Վերջին օրն է:

Կէս գիշեր է հիմա, գլուխս կը ցաւի կոր, խենթի պէս խմեցի այսօր ճաշի սեղանին վրայ, բան մը մոռնալու թէ յիշելու համար՝ շատ լաւ չեմ գիտեր հիմա: Անկարելի, անհաւատալի օր մըն էր այսօր, վերջինը այս տարուայ Շաբթուան: Սիրոյ օր պիտի ըլլար, սիրոյ եւ հրաժեշտի օր մը բոլոր բարեկամներուս հետ: Առտուն որոշեր էի կեանքիս էն մեծ գաղտնիքին ծայրը հասնիլ եւ հասկնալ, առջին, վերջին ու մէկ անգամ՝ ըսել եւ լսել սիրել բառը, իմ բերնէս եւ անոր բերնէն: Ամբողջ երիտասարդութիւնս աս յոյսով, աս սպասելով անցաւ գնաց: Գնաց թէ դեռ հոս է, մէջս, անոր մէջ, մեր ձեռքերուն մէջ, միայն թէ հանդիպինք: Չեմ գիտեր, հասա՞յ ծայրը գաղտնիքիս: Մէր կա՞յ, իրա՞ւ է, կ'ապրի սէրը մարդոց մէջ, կրնա՞յ կեանք մը լեցնել, երկու կեանքը մէկ կեանքի վերածել, թէ՛ աս է սէրը, ինչ որ ես կ'ապրիմ: Աս կասկածը, աս փնտոտուքը, աս յոյսը, տառապանքը, աս չգիտնալը, աս հարցումներուն պատասխանը փնտոելը....:

Չեմ գիտեր: Տեսայ իրեն այսօր, ո՞ւր սակայն՝ վստահ չեմ: Տեսայ՝ բայց սէրը կը մնայ պահուրտած, առանց ձայնի, առանց բառի, կեանքի էն կարեւոր բանը բայց որ արգիլուած է գիտնալ, արտասանել, գրել, խօսիլ....: Չեմ գիտեր, աս զրաժներս իմաստ մը ունի՞ն: Լաւ որ գինով եմ, պէտք չունիմ յստակ մտածելու:

Գլուխս ցաւիլ սկսած է: Բայց գլխու խնդիր չէ աս: Գլուխը միայն երա-
զելու համար շինուած է, եւ ես այսօր երազի մէջ ապրեցայ: Կը թուի թէ ոչ
սիրելով կրնաս ապրիլ՝ ոչ ալ առանց սիրելու:

Ով դուն անձանօթ մարդ, ո՞ւր ես, ո՞ւր... հասիր, գնաց կեանքս... չէ չէ
ոչինչ կ'երթայ որքան ատեն սէրը կ'ապրի, պիտի ապրի...»

x

x

x

Բաց ալպոմը գիրկը, քնացեր էր, պատուհանին քով: Առտուան մօտ արթնցաւ:
Մարմինը կը ցաւէր, ուսերէն ու մէջքէն: Դժուարութեամբ ոտքի կայնեցաւ, ալպոմը
գետին ինկաւ, մեծ աղմուկով:

-- Ախ:

Բառը փրթաւ կուրծքէն, ծոցաւ անմիջապէս վերցուց, գուրգուրանքով սե-
ղանին վրայ դրաւ: Ժամացոյցին նայեցաւ աս ի՞նչ կանուխ է մոլտաց: Շուարած
քիչ մը շարժեցաւ սենեակին մէջ, ի վերջոյ ետ նստաւ քաղկամտով:

Ոչինչ կար ընելիք, աշխարհ դադրած էր, կեանքը դադրած էր շուրջը, մէջը,
դուրսը: Ամբողջ տարին այս օրուան, այս վայրկեանին սպասեր էր որ նորէն
սկսէր, ծայրէն ուրիշ քան չեմ ուզեր մտածեց, յիշելով Աղաւնիին կիսադէմը
ճաշարանը, ամէն տարի կրկնուող միայն թէ գիտնամ խորհեցաւ, քաջութիւնը
ուսնենամ նայելու, հարմարութիւնը:

Դող մը անցաւ վրայէն, բայց ներսէն ուրախ էր երազի պէս անցաւ այս տարի
մտածեց, վաղը նորէն կը սկսիմ ապրիլ, մէկ տարի ալ ու միտքը եկան ֆիլատելֆիոյ
իր պատիկ տունը, իր Փիսոն, պատշգամին թաղարները, թիվին...:

Երկարեց ձեռքը, սեղանին վրայէն առաւ ալպոմը, բացաւ իր սիրած պատկերին
տեղը, ներս առաւ հին, ծանօթ հոտը, ձեռքը մեղմօրէն դրաւ մեծ պատկերին վրայ
ինչպէս միշտ կ'ընէր ու սիրոյ, կարօտի քաղցր, անուշ զգացումը նորէն լեցուց
իր անձը:

Գոցուեցան աչքերը: Երջանիկ էր:

Վահէ Օշական
29 Սեպտեմբեր, 1998
Ռէտնըր: